ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ. norkharberd.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» դեկտեմբերի 2014 թվականի N 17-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 2014 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1.6.1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություն / հոդվածից պակասեցնել 20.0 հազար դրամ՝ այն ուղղելով 4111 /աշխատավարձ/ հոդվածին:
2. 10.7.1 «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի 4726 /հողարկավորության նպաստներ բյուջեից/ պակասեցնել 550.0 հազար դրամ՝ այն ուղղելով 4729 /այլ նպաստներ բյուջեից / հոդվածին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /10/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ	ԱՂԱԽԱՆՅԱՆ	
ԵՐՎԱՆԴ	ԱՎԵՏԻՍՅԱՆ	
ԱՐԹՈՒՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ	
ՄԻՍԱԿ	ԹՈՎՄԱՍՅԱՆ	
ԱՐՄԵՆ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ՎՈՒԼՈՒԴՅԱ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ԽՈՐԵՆ	ՀԱԿՈԲՅԱՆ	
ՄԱՆՎԵԼ	ՆԵՐՍԵՍՅԱՆ	
ԱՐՄԱՆ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ԳՈՌ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿՆՔ 09501369

ԿԱՍՊ ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 10» դեկտեմբերի 2014 թվականի N 18-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 20145թվականին սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝25000 դրամ.

բդ/ 3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

1.2 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար 0.5 գործակցի կիրառմամբ, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

1.3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 0.5 գործակցի կիրառմամբ տեղական տուրք սահմանել 2500 դրամ:

1.4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

ա/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

1.5. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա համար սահմանել 10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ,

գ/ խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ,

գա/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

-հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500 դրամ,

-ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ:

1.6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները/սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ,

գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝200 000 դրամ,

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

1.7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

1.8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար տեղական տուրք սահմանել 1000 դրամ.

1.9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

1.10 Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքում 2015 թվականին սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

2.1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000 դրամ:

2.3. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000 դրամ:

2.4. Գյուղապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:

2.5.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար գյուղապետարանի կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել.
ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ,
բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /10/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ	ԱՂԱԽԱՆՅԱՆ	
ԵՐՎԱՆԴ	ԱՎԵՏԻՍՅԱՆ	
ԱՐԹՈՒՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ	
ՄԻՍԱԿ	ԹՈՎՄԱՍՅԱՆ	
ԱՐՄԵՆ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ՎՈՒԼՈՒԴՅԱ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ԽՈՐԵՆ	ՀԱԿՈԲՅԱՆ	
ՄԱՆՎԵԼ	ՆԵՐՍԵՍՅԱՆ	
ԱՐՄԱՆ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ԳՈՌ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՍՊ ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » դեկտեմբերի 2014թվականի N 19- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2015 թվականին սահմանել 240000 հազար դրամ:

Կողմ /10/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱԽԱՆՅԱՆ
ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՄԻՍԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՄԱՆՎԵԼ ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՈՌ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ ԿԱՍՊ ԿԱԿՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ.norkharberd@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 10» դեկտեմբերի 2014 թվականի N 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդի գյուղապետարանի աշխատակազմի , համայնքային բյուջետային հիմնարկների կառուցվածքները, աշխատակիցների թվաքանակը , հաստիքային ցուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածներ N N 1, 2, և 3 - ի:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /10/ Դեմ/0/ Ձեռնպահ/0/

ԿԱՐԱՊԵՏ	ԱՂԱԽԱՆՅԱՆ	
ԵՐՎԱՆԴ	ԱՎԵՏԻՍՅԱՆ	
ԱՐԹՈՒՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ	
ՄԻՍԱԿ	ԹՈՎՄԱՍՅԱՆ	
ԱՐՄԵՆ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ՎՈՒԼՈՒԴՅԱ	ԽԱՉԱՏՐՅԱՆ	
ԽՈՐԵՆ	ՀԱԿՈԲՅԱՆ	
ՄԱՆՎԵԼ	ՆԵՐՍԵՍՅԱՆ	
ԱՐՄԱՆ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	
ԳՈՌ	ՎԱՐԴԱՆՅԱՆ	

ՀԱՅԱՍՏԱՆ Հ Հ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԿԱՍՊ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված N 1

Նոր Խարբերդ համայնքի ավագանու

10.12.2014 թվականի N 20- Ն որոշման

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 34

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	190000
Համայնքի ղեկավարի օգնական	1	120000
Համայնքի ղեկավարի խորհրդական	1	106000
Համայնքի ղեկավարի խորհրդական ֆինանսների գծով	1	100000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	194000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ /2.3-2/	2	185000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ /3.1-2/ /3.1-3/	3	130000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ /3.2-2/	2	120000
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ /3.3-2/	2	110000

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Գործավար	1	110000
Վարորդ	1	96000
Պահակ	1	70000
Հավաքարար	1	70000
Հարկահավաք	1	100000

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	110000
Գեղարվեստական մասի ղեկավար	1	90000
Հրահանգիչ	1	70000
Կազմակերպիչ	1	70000
Հավաքարար	1	70000
Բանվոր	1	70000

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	80000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/գյուղապետարանի պայմանագրային աշխատողներ/

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Աղբատար մեքենայի վարորդ	1	240000
Աղբատար մեքենայի վարորդ	2	120000
Բանվոր	3	70000
Վարորդ	1	70000
Հարկահավաք	1	100000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 2

Նոր Խարբերդ համայնքի ավագանու

10.12. 2014 թվականի N 20- Ն որոշման

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	165000
Դաստիարակ	3,75	465000
Դաստիարակի օգնական	3,3	255000
Երաժշտության դաստիարակ	0,75	95000
Բուժ.քույր	1	80000
Գործավար	0,5	70000
Հաշվապահ	0,5	80000
Տնտեսվար	0,5	70000
Խոհարար / խոհարարի օգնական	1,5	115000
Լվացարար	1	70000
Պահակ	3	210000
Օժանդակ բանվոր / դերձակ/	1	70000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 3

Նոր Խարբերդ համայնքի ավագանու

10.12.2014 թվականի N 20- Ն որոշման

ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ /ՀՈԱԿ/ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 18

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	100000
Ուսմասվար	1	75000
Երաժշտության ուսուցիչ	12/345,5 ժամ	1151660
Հաշվապահ	1	90000
Հավաքարար	1	70000
Գործավար	1	70000
Պահակ	1	71000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Նոր Խարբերդ համայնք, Բաղրամյան 10,
հեռ. /0236/ 60030, էլ. փոստ. norkharberd.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » դեկտեմբերի 2014 թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 36-րդ կետի առաջին պարբերության պահանջներով, հիմք ընդունելով կիսակառույցը վարձակալելու վերաբերյալ ինքնակամ կառուցապատող Հ. Բաղալյանի գրավոր համաձայնությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի Երևան-Արտաշատ խճուղի թիվ 73/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.05807 հեկտար հողամասը 5000 /հինգ հազար / դրամ վճարով և 38.25 քմ արտաքին չափերով օրինականացված կիսակառույց արհեստանոցը 5000 /հինգ հազար / դրամ վճարով, 99 տարի ժամկետով տրամադրել վարձակալության կառույցն իրականացրած անձ Հովհաննես Աշոտի Բաղալյանին :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ /10/		Դեմ/0/	Ձեռնպահ/0/
ԿԱՐԱՊԵՏ	ԱՂԱԽԱՆՅԱՆ		
ԵՐՎԱՆԴ	ԱՎԵՏԻՍՅԱՆ		
ԱՐԹՈՒՐ	ԳՐԻԳՈՐՅԱՆ		
ՄԻՍԱԿ	ԹՈՎՄԱՍՅԱՆ		
ԱՐՄԵՆ	ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ՎՈՒԼՈՒՅԱ	ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԽՈՐԵՆ	ՀԱԿՈԲՅԱՆ		
ՄԱՆՎԵԼ	ՆԵՐՍԵՍՅԱՆ		
ԱՐՄԱՆ	ՎԱՐԴԱՆՅԱՆ		
ԳՈՌ	ՎԱՐԴԱՆՅԱՆ		

ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ